ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Հայաստանի Հանրապետության իններորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացման անհրաժեշտությունը պայմանավորված է Սահմանադրության 106-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաեւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, 112-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարման ապահովման, այն է՝ իններորդ գումարման Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների ձեւավորման անհրաժեշտությամբ:

Նախագծով առաջարկվում է իններորդ գումարման Ազգային ժողովում ստեղծել 12 մշտական հանձնաժողով:

Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մշտական հանձնաժողովներում տեղերը բաշխվում են խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Հաշվի առնելով, որ իններորդ գումարման Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն ունի 64 անդամ, «Ուժեղ Հայաստան» խմբակցությունը՝ 29 անդամ, իսկ «Հայաստան» խմբակցությունը՝ 12 անդամ, Նախագծով առաջարկվում Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների անդամների նվազագույն թիվը սահմանել 8, իսկ մյուս հանձնաժողովների անդամների ընդհանուր թիվը սահմանել՝ հաշվի առնելով գործնականում այդ հանձնաժողովների աշխատանքային ծանրաբեռնվածությունը: